ԿԱՐԳ

Թառեւ-հող ձեւաչափի միջոցառումների հյութատեխնիկական հարցերի կազմակերպման ծառայության

գնման **44 / 23** ԹՀԿ ծածկագրով մրցույթի

Հարգելի մասնակից,

- նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն կարգը, քանի որ կարգին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Միաժամանակ,

- Հայտերը ներբեռնելիս և ներկայացնելիս պետք է առաջնորդվել մրցութային հանձնաժողովի կողմից հայտարարված մրցույթի ժամանակացույցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
2. Փաթեթը ներկայացնելու կարգը
3. Փաթեթների բացումը, գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը
4. Պայմանագրի կնքումը
5. Մրցույթը չկայացած հայտարարելը

1. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

1.1 Մասնակիցների մասնակցության իրավունքի չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

- եթե Մասնակիցը մրցույթին ներկայացրել է մրցույթով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,
- բացի սահմանված անհրաժեշտ փաստաթղթերից, այլ փաստաթղթեր՝ հիմնավորման կամ այլ նպատակներով, մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից, չեն կարող պահանջվել:

1.2 Սույն մրցույթին մասնակցելու իրավունք չունեն իրավաբանական այն անձինք՝

- որոնք փաթեթը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- որոնք փաթեթը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

Եթե Մասնակիցը ներկայացրել է սույն մրցույթով նախատեսված գրավոր հայտարարություն /հավելված 1/, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

1.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար սույն կարգով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն, որը հավաստվում է Մասնակցի կողմից ներկայացված սույն մրցույթով նախատեսված գրավոր հայտարարությամբ /հավելված 2/:

Հնդ որում, Մասնակցի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

- Մասնակիցը ներկայացնում է հայտարարություն, որ փաթեթը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի 50 (հիսուն) տոկոսից:

2. Փաթեթը ներկայացնելու կարգը

2.1 Փաթեթները պետք է ներկայացնել մինչև դրա համար սույն կարգով սահմանված ժամկետի ավարտը:

2.2 Փաթեթները պետք է ներկայացնել ծրարներով՝ սոսնձված և փակման տեղում կնքված, և ծրարի վրա պետք է լինեն հետևյալ նշումները.

ա) դիմող կազմակերպության անվանումը և փաթեթի ներկայացման վայրը (հասցեն),

բ) մրցույթի ծածկագիրը,

գ) «չբացել մինչև փաթեթների բացման նիստը» բառերը,

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված փաթեթների՝ վերջնական ժամկետից ուշ, կամ բացված տեսքով, կամ վնասված փաթեթ ստանալու դեպքերում:

Ժամկետից ուշ ստացված, կամ էլեկտրոնային եղանակով ուղարկված փաթեթները ՉԵՆ ԲԱՑՎԻ ԵՎ ՉԵՆ ԴԻՏԱՐԿՎԻ:

3. Փաթեթների բացումը, գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը

3.1 Փաթեթների բացման նիստում մրցութային հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարում է բացված և հրապարակում է ստացված փաթեթները:

3.2 Գնահատման գործընթացը կատարվում է մրցույթի պահանջներին համապատասխան: Ընդ որում, փաթեթների բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն փաթեթները, որոնցում բացակայում է սույն կարգի պահանջներին համապատասխան ներկայացված փաստաթղթերից որևէ մեկը:

3.3 Գնահատման արդյունքները վավերացվում են մրցութային հանձնաժողովի կողմից, որից հետո հայտերը դասակարգվում են ըստ գնահատման արդյունքների՝ նվազագույն գնային առաջարկից մինչև առավելագույն գնային առաջարկը:

3.4 Մրցութային հանձնաժողովն անմիջապես ստեղծում է գնահատման մասին արձանագրությունը:

3.5 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված փաթեթ ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

3.6 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի կնքումը

4.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ :

4.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4.3 Պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ստացած Մասնակիցը պարտավոր է 7 օրացուցային օրվա ընթացքում ընդունել կամ մերժել իրեն ներկայացված առաջարկը գրավոր:

5. Մրցույթը չկայացած հայտարարելը

5.1 Մրցութային հանձնաժողովը սույն մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝

- փաթեթներից ոչ մեկը չի համապատասխանում հայտարարության պայմաններին,
- դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը,
- ոչ մի փաթեթ չի ներկայացվել,
- պայմանագիր չի կնքվել:

5.2 Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուն իր կայքում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը: